



Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2017թ. թիվ 31

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏԱՐԻ

Արհմիությունների համընդհանուր համադաշնություն

Սեպտեմբերի 12-ին ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում՝ Աշխատանքի պալատում, Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը Պետական հիմնարկների աշխատողների Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի պատվիրակության կազմում մասնակցեց Արհմիությունների համընդհանուր համադաշնության 8-րդ համագումարին:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էր 131 պատվիրակ:

Համագումարին Հայաստանի արհմիությունները ներկայացնում էին 8 պատվիրակ՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էդուարդ Թումասյան, Հայաստանի կրթության և գիտության ՃՀՄ-ի նախագահ Գրիգոր Ղարիբյան, Ագրոարդյունաբերական համակարգի ՃՀՄ-ի նախագահ Հասմիկ Զհանգիրյան, Հայաստանի Կոմունալ-բնակարանային տնտեսության ՃՀՄ-ի նախագահ Սեդա Հարությունյան, Իսկ Առողջապահության աշխատողների ՃՀՄ-ի նախագահ Գայանե Արմաղանովան, Արդյունաբերության աշխատողների ՃՀՄ-ի նախագահ Համլետ Դանիելյանը, ՀՀ լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների ՃՀՄ-ի նախագահ Էդուարդ Փահլևանյանը պատվիրակ էին ընտրվել համապատասխան արհմիությունների միջազգային միավորումներից:

Հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ ԱՀՀ գլխավոր քարտուղար Վլադիմիր Շչերբակովը: ԱՀՀ վերստուգիչ հանձնաժողովի զեկույցը ներկայացրեց Ալեքսանդր Շուրիկովը:

Համագումարում ելույթով հանդես եկավ նաև ՀԱՄԿ-ի նախագահ Էդուարդ Թումասյանը:

Արհմիությունների համընդհանուր համադաշնության գլխավոր քարտուղար՝ Վլադիմիր Շչերբակովը, նախագահ վերընտրվեց Միխայիլ Շմակովը:

Համագումարն ընդունեց Արհմիությունների համընդհանուր համադաշնության 2017-2021 թթ. գործունեության ծրագիրը:

Համագումարը ընտրեց խորհուրդ, որի կազմում Հայաստանի արհմիությունները ներկայացնելու են Էդուարդ Թումասյանը, Գրիգոր Ղարիբյանը և Անահիտ Ասատրյանը: Ե. Թումասյանն ընտրվեց նաև ԱՀԿ գործկոմի անդամ:

Պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների միջազգային ֆեդերացիա

Համագումարը տեղի ունեցավ սեպտեմբերի 14-ին ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում՝ «Սալյուտ» հյուրանոցում: 7-րդ համագումարին մասնակցում էին ֆեդերացիայի 11 անդամ կազմակերպություններից հինգական պատվիրակներ, հրավիրվածներ: Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների

արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը համագումարում ներկայացնում էին ՃՀՄ խորհրդի անդամներ Անահիտ Ասատրյանը, Աշոտ Ղազեյանը, Գևորգ Գևորգյանը, Մարգարիտա Պետրոսյանը, Կարեն Մնացականյանը: Հրավիրված էր մասնակցելու նաև ՃՀՄ գլխավոր հաշվապահ Ռուբեն Օհանջանյանը՝ որպես ԱՄՖ վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածու:

Համագումարը լսեց նախագահ Վ.Սավլենկոյի հաշվետվությունը 2012-2017թթ. համար և բավարար համարեց նրա գլխավորությամբ խորհրդի աշխատանքը: Ելույթով հանդես եկավ նաև ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանը:

Համագումարը միաձայն ընտրեց ԱՄՖ նախագահ՝ Ն.Վոդյանովին, ով զբաղեցնում է Ռուսաստանի պետհիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիության նախագահի պաշտոնը: Համագումարը ընտրեց նաև վերստուգիչ հանձնաժողով, որն իր անդրանիկ նիստում ՃՀՄ ներկայացուցիչ Ռ.Օհանջանյանին ընտրեց հանձնաժողովի նախագահ:



Նախորդ օրը Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը նույն հյուրանոցում մասնակցել էր ԱՄՖ խորհրդի նիստին: Նիստում քննարկվել էին ԱՄՖ 7-րդ համագումարի հետ կապված կազմակերպական հարցեր:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Հոկտեմբերի 6-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի 4-րդ համագումարը: Հայաստանի պետհիմնարկների արհմիությունը համագումարում ներկայացավ ութ պատվիրակով՝ ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյան, ՃՀՄ խորհրդի անդամներ Աիդա Աչինյան, Արթուր Խաչատրյան, Էդուարդ Մխիթարյան, Կարինե Գրիգորյան, Նելսոն Մարգարյան, Սամվել Ավետիսյան, Սիմակ Դանիելյան:

Համագումարը լսեց ՀԱՄԿ-ի նախագահ Է. Թումասյանի 2012-2017 թթ. հաշվետվությունը ՀԱՄԿ-ի ղեկավար մարմինների կատարած աշխատանքների մասին, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը, հաստատեց ՀԱՄԿ-ի 2017-2022թթ. գործունեության ծրագիրը, կազմավորեց ՀԱՄԿ-ի գործկոմը, խորհուրդը, վերստուգիչ հանձնաժողովը:

Ի դեպ, ՀԱՄԿ-ի նախագահի ելույթում ևս մեկ անգամ ընդգծվեց Հայաստանի պետհիմնարկների արհմիության դերը արհմիութենական շարժման մեջ:

Հաշվետու-ընտրական համագումարն ընտրեց ՀԱՄԿ-ի նախագահ և տեղակալներ. բաց քվեարկությամբ ՀԱՄԿ-ի նախագահ վերընտրվեց Էդուարդ Թումասյանը, ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալներ վերընտրվեցին Բորիս Խարատյանը և Խաչիկ Առաքելյանը:

ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Սեպտեմբերի 9-ին Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանում գումարվեց Գավառի տարածքի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհմիության 6-րդ համաժողովը:

Համաժողովին մասնակցում էին ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը և գլխավոր հաշվապահ Ռ.Օհանջանյանը:

Օրակարգի հարցերի շրջանակում միության նախագահ Ս.Դանիելյանը ներկայացրեց կազմակերպության գործունեության վերջին հինգ տարիների հաշվետվությունը, լսվեց նաև վերստուգիչ հանձնաժողովի հինգ տարվա ամփոփը, ընտրվեցին միության ղեկավար մարմիններ: Միության նախագահ վերընտրվեց Ս.Դանիելյանը:

Քննարկվեցին արհմիութենական, կազմակերպական այլ հարցեր:

ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանը Գավառի արհմիութենականներին ներկայացրեց պետհիմնարկների արհմիության ներկա գործունեությունը, արդի խնդիրները, կարևորեց Գավառի տարածքային արհմիության դերը հանրապետական արհմիությունում: ՃՀՄ նախագահը շնորհակալագիր հանձնեց միությանը՝ արհմիութենական միասնականության, ակտիվ աշխատանքի, ճյուղային հանրապետական արհմիության ձեռնարկած միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու, արհմիության զարգացման գործում զգալի ներդրման համար:

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին կայացավ Վարդենիսի տարածքի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միության համաժողովը, որի ընթացքում պատվիրակները մեկ ընթացքում հարգեցին նախագահ Արծրուն Մանուկյանի հիշատակը: Բաց քվեարկությամբ միության նոր նախագահ ընտրվեց Սեյրան Գրիգորյանը:

Համաժողովի ընթացքում ընտրվեց նաև նախագահություն և վերստուգիչ հանձնաժողով:

«ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ». ՄԱՍ 2

Ս.թ. հունիսի 9-ին անցկացված երիտասարդական սեմինարը շարունակվեց սեպտեմբերի 23-24-ը Աղվերանի «Արարատ ռեզորթ» հյուրանոցում: «Արհմիութենական այբուբեն» թեմայի շրջանակում անդամ կազմակերպությունների շուրջ քսան երիտասարդներ խմբային աշխատանքներով ամփոփեցին արհմիության մասին ունեցած իրենց գիտելիքները՝ արհմիության էության, ղեկավարման, վերահսկման, գործունեության սկզբունքների ու ուղղությունների մասին:

ՃՀՄ նախագահ Ա.Ասատրյանն ու գլխ.հաշվապահ Ռ.Օհանջանյանը մասնակիցներին ծանոթացրին արհմիությունների տեսակներին, օրենսդրությանը, մեր երկրում արհմիությունների իրավունքներին, արհմիության միջազգային գործընկերությանը և այլն: Սեմինարի երկրորդ օրը երիտասարդ արհմիութենականները հանդիպում ունեցան արհմիութենական տարբեր սեմինարներ անցած երիտասարդների՝ արհմիության երիտասարդական թևի ներկայացուցիչների հետ, ովքեր ներկայացրին թևի գործունեությունը և կոչ արեցին ակտիվ մասնակցություն ունենալ արհմիության գործողություններին:

Կարևորելով արժանապատիվ աշխատանքի դերը և, Արժանապատիվ աշխատանքի համար գործողությունների օրվան ընդառաջ, մասնակիցները համապատասխան

կարգախոսներով խորհրդանշեցին Հոկտեմբերի 7-ը՝ այդպիսով միանալով աշխարհի արհմիությունների գործողություններին:

EPSU-ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՑԱՆՑԻ 8-ԸՆԴ ՀԱՎԱՔԸ ԲԵՌՆԻՆՈՒՄ

Սեպտեմբերի 8-9 Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, Գերմանիայի հանրային ծառայությունների արհմիության (Ver.di) գրասենյակում տեղի ունեցավ Եվրոպայի Հանրային Ծառայությունների Արհմիության (EPSU) 8-րդ երիտասարդական հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին EPSU-ի անդամ արհմիությունների 55 ներկայացուցիչներ մոտ 30 երկրներից, որոնց թվում էր նաև Հայաստանի պետհիմնարկների ճյուղային արհմիության երիտասարդ ներկայացուցիչը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են անդամակցող կազմակերպություններում առկա խնդիրները, անդամակցության նվազումը, երիտասարդ աշխատողների առջև ծառայող խնդիրները աշխատաշուկայում, արհմիությունների վարկանիշը:

Մշակվել է EPSU-ի երիտասարդական ցանցի հետագա անելիքներն ու ռազմավարությունը, կատարվել են նախապատրաստական աշխատանքներ կապված հոկտեմբերին Ժնևում կայանալիք PSI (Հանրային ծառայությունների ինտերնացիոնալ) համագումարի հետ: Համագումարին մասնակցելու համար ձևավորվել է ղեկավար հանձնաժողով, ինչպես նաև գործնական խմբեր (առաջիադացման, կոմունիկացիայի և մեդիայի)՝ երիտասարդական ցանցի աշխատանքը կոորդինացնելու համար:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7. ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Երիտասարդ արհմիութենականների առաջարկով Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության անդամ կազմակերպությունները Արժանապատիվ աշխատանքի համար գործողությունների համաշխարհային օրվա առթիվ յուրահատուկ ֆլեշմոբ կազմակերպեցին ֆեյսբուք սոցիալական ցանցում: Աշխատողները նկարահանվեցին իրենց աշխատատեղերում Արժանապատիվ աշխատանքին նվիրված պաստառներով: Ֆլեշմոբը ֆեյսբուքի օգտատերերի կողմից մեծ ուշադրության արժանացավ: Դրանով միանալով աշխարհի արհմիությունների աշխատավարձերի բարձրացման, եկամուտների բաշխման հետ կապված սոցիալական արդարության, արդար հարկային քաղաքականության համար պայքարին՝ Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիությունը բարձրաձայնեց նաև մեր երկրում պետական հիմնարկների աշխատողների, հանրային ծառայողների տարիներ շարունակ չլուծվող խնդիրների մասին: Սոցիալական փաթեթը հասանելի է պետական ոլորտի աշխատողների ոչ բոլոր խմբերին, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակայության կազմակերպությունների աշխատողներին, պետական ծառայողները և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողները պաշտպանված չեն գործատուների կամայականությունից: Եվս մեկ անգամ բարձրաձայնվեց Հայաստանի Հանրապետությունում հունիսի 23-ը որպես հանրային ծառայողի օր հռչակման կարևորությունը: Արհմիության անդամները հաստատեցին, որ ուզում են ապրել մի երկրում,

որտեղ քաղաքացին պաշտպանված է, որտեղ գործում է արդարությունը եւ որտեղ հնարավորություն կա ապահով ու երջանիկ սերունդ դաստիարակելու: